

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (ՀՈՒՆԱՐԵՆ ԳԱՐՉՎԱԾՔՆԵՐ)**  
**SPECIAL TOPIC: FOREVER (GREEK IDIOMS)**

Հունարեն դարձվածքաբանական արտահայտություններից մեկն է «դարեր շարունակը» (տես՝ Ղուկ. 1:33, Հռոմ. 1:25, 11:36, 16:27, Գաղ. 1:5, 1 Տիմ. 1:17), որը կարող է արտահայտել եբրայերենի *olam* տերմինը: Տես Ռոբերտ Բ. Գրոյսթոունի, *Հին Կտակարանի Հոմանիշներ*, էջ՝ 319-321, և Հատուկ Թեմա. Հավիտյանս ('Olam), էջ՝ . . . /Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*, pp. 319-321, and Special Topic: Forever ('Olam)/:

Այս արտահայտության հետ կապ ունեցող խոսքերից են «դարեդարը» (տես՝ Մատթ. 21:19, Մարկ. 11:14, Ղուկ. 1:55, Հովհ. 6:58, 8:35, 12:34, 13:8, 14:16, 2 Կորնթ. 9:9) և «բոլոր դարերում» (տես՝ Եփես. 3:21): Թվում է, թե ոչ մի տարբերություն չկա «հավիտյան» բառի հունարեն այս դարձվածքների միջև: «Դարեր» տերմինը կարող է լինել ՀՈԳՆԱԿԻ փոխաբերական իմաստով ըստ ռաբբիական քերականական կառուցվածքի, որը կոչվում է «ՄԵԾԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻՈՒԹՅՈՒՆ» կամ այն կարող է վերաբերել մի քանի «դարերի» հասկացությանը՝ համաձայն հրեական «ամբարշտության դար /ժամանակաշրջան/», «գալիք դար» կամ «արդարության դար» նշանակության (տես՝ Հատուկ Թեմա. Այս և Գալիք Դարաշրջանները, էջ՝ 21):